



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

## Հ Ր Ա Մ Ա Ն № 1-Լ

### ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հուլիսի 12-ի թիվ ԲԴԽ-25-Ո-58 որոշման 1-ին հավելվածի 19-րդ կետի 11-րդ ենթակետի և 2018 թվականի օգոստոսի 6-ի թիվ ԲԴԽ-31-Ո-74 որոշման՝

1. Հաստատել Դատական դեպարտամենտի հաստիքացուցակը, ըստ կենտրոնական մարմնի և առանձնացված ստորաբաժանումների՝

1) Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի հաստիքացուցակը՝ համաձայն 1-ին հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի աշխատակազմի հաստիքացուցակը՝ համաձայն 2-րդ հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի հաստիքացուցակը՝ համաձայն 3-րդ հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի հաստիքացուցակը՝ համաձայն 4-րդ հավելվածի.

5) Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանի աշխատակազմի հաստիքացուցակը՝ համաձայն 5-րդ հավելվածի.

6) Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի աշխատակազմի հաստիքացուցակը՝ համաձայն 6-րդ հավելվածի.

7) Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանի աշխատակազմի հաստիքացուցակը՝ համաձայն 7-րդ հավելվածի.

8) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի հաստիքացուցակը՝ համաձայն 8-րդ հավելվածի.

9) Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի հաստիքացուցակը՝ համաձայն 9-րդ հավելվածի.

10) Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի հաստիքացուցակը՝ համաձայն 10-րդ հավելվածի.

11) Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի հաստիքացուցակը՝ համաձայն 11-րդ հավելվածի.

12) Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի հաստիքացուցակը՝ համաձայն 12-րդ հավելվածի.

13) Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի հաստիքացուցակը՝ համաձայն 13-րդ հավելվածի.

14) Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի հաստիքացուցակը՝ համաձայն 14-րդ հավելվածի.

15) Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի հաստիքացուցակը՝ համաձայն 15-րդ հավելվածի.

16) Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի հաստիքացուցակը՝ համաձայն 16-րդ հավելվածի.

17) Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի հաստիքացուցակը՝ համաձայն 17-րդ հավելվածի.

18) Դատական կարգադրիչների ծառայության հաստիքացուցակը՝ համաձայն 18-րդ հավելվածի:

## 2. Սահմանել, որ Դատական դեպարտամենտում՝

1) վարչական, հայեցողական, դատական ծառայության, դատական կարգադրիչների ծառայության և քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց ամսական վարձատրության չափը որոշվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.

2) քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց ամսական վարձատրության չափը որոշվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի թիվ 737-Ն որոշմամբ սահմանված կարգով և սույն հրամանով հաստատված հաստիքացուցակով:

## 3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2019թ. հունվարի 31  
ք. Երևան